ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/214

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.05.2022թ. թիվ 26/26-1/9973-2022 գրությամբ «Թեքնոլաբ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի 24.05.2022թ. թիվ Հ.Մ./02-94/22 գրության հիման վրա, 31.05.2022թ. թիվ 26/26-1/9973-2022 գրությամբ նախաձեռնել է «Թեքնոլաբ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Թեքնոլաբ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Թեքնոլաբ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Թեքնոլաբ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/214 ընթացակարգի շրջանակներում 03.06.2022թ. ժամը 12:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 24.05.2022թ. թիվ Հ.Մ./02-94/22 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության կարիքների համար՝ «համակարգչային տեխնիկայի, պարագաների և նյութերի» ձեռքբերման նպատակով 2022 թվականի ապրիլի 11-ին հայտարարվել է ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/24 ծածկագրով գնման ընթացակարգի հայտարարությունը և հրավերը:

2022 թ.-ի ապրիլի 21-ի էլեկտրոնային աճուրդ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստում մրցույթի մասնակից «Թեքնոլաբ» ՍՊԸ-ն 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով, որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, ճանաչվել է ընտրված մասնակից:

2022 թ.-ի մայիսի 5-ին, հիմք ընդունելով ՀՀ գնումների մասին օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետը, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությունը ծանուցել է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, սակայն «Թեքնոլաբ» ՍՊ ընկերությունը խախտել է ՀՀ գնումների մասին օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները՝ E-Auction համակարգով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը, և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրել պայմանագիրը և չի ներկայացրել պայմանագրի ապահովումը:

Հիմք ընդունելով ՀՀ Գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ ենթակետը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 45-րդ կետը՝ խնդրում ենք Ձեզ՝ «Թեքնոլաբ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/214 ընթացակարգի շրջանակներում 03.06.2022թ. ժամը 12:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/214 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/214 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Թեքնոլաբ» ՍՊԸ-ն:
2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.04.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Թեքնոլաբ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:
3. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն 24.05.2022թ. թիվ Հ.Մ./02-94/22 գրությամբ հայտնել է, որ 05.05.2022թ., հիմք ընդունելով ՀՀ գնումների մասին օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետը, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությունը ծանուցել է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, սակայն «Թեքնոլաբ» ՍՊԸ-ն խախտել է ՀՀ գնումների մասին օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները՝ E-Auction համակարգով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը, և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրել պայմանագիրը և չի ներկայացրել պայմանագրի ապահովումը:
4. Պատվիրատուի կողմից չեն ներկայացվել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը:

5. **<u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 31.05.2022թ. թիվ 26/26-1/9973-2022 գրությունը, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի 24.05.2022թ. թիվ Հ.Մ./02-94/22 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. ***<u>Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:</u>*** Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին: Որակավորման ապահովում չի ներկայացվում, եթե ընտրված մասնակիցը կամ տվյալ ընթացակարգի շրջանակում վերջինիս կողմից՝ որպես պաշտոնական ներկայացուցիչ, մատակարարվող ապրանքներն արտադրող կազմակերպությունը, հայտերը բացելու օրվա դրությամբ ունի միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (Fitch, Moodys, Standard & Poor’s) կողմից շնորհված վարկունակության վարկանիշ առնվազն Հայաստանի Հանրապետությանը շնորհված սուվերեն վարկանիշի չափով: Եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը՝

- չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի տասնհինգ, իսկ գերազանցելու դեպքում՝ երեսուն տոկոսին.

- չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, որակավորման ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի

կամ կանխիկ փողի ձևով, բացառությամբ շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների գնումների, որոնց դեպքում ապահովումը ներկայացվում է սույն պարբերությամբ նախատեսված երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով.

- գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, որակավորման ապահովումը ներկայացվում է բանկերի կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքների կամ կանխիկ փողի ձևով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ **համապատասխան հիմքերով**, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Այսպես, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Թեքնոլաբ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.04.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Թեքնոլաբ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն 24.05.2022թ. թիվ Հ.Մ./02-94/22 գրությամբ հայտնել է, որ 05.05.2022թ., հիմք ընդունելով ՀՀ գնումների մասին օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետը, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությունը ծանուցել է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և

պայմանագրի նախագիծը, սակայն «Թեքնոլաբ» ՍՊԸ-ն խախտել է ՀՀ գնումների մասին օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները՝ E-Auction համակարգով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը, և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրել պայմանագիրը և չի ներկայացրել պայմանագրի ապահովումը:

Պատվիրատուի կողմից չեն ներկայացվել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը:

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, 24.05.2022թ. թիվ Հ.Մ./02-94/22 գրությամբ լիազորված մարմին է ներկայացրել թիվ «ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, Ընկերության Դիմում-Հայտարարությունը, պայմանագիր կնքելու մասին որոշման վերաբերյալ հայտարարությունը և Ընթացակարգը 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը:

Այսպիսով՝ Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. ***<u>Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:</u>*** Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Ընթացակարգի հրավերի 9.1, 9.2 և 9.3 ենթակետերի համաձայն՝

9.1 Պայմանագիր կնքվում է հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից: Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

<u>9.2 Սույն հրավերի 1-ին մասի 8.25 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ընտրված մասնակցին է ներկայացնում պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:</u>

Ընդ որում պայմանագրում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով՝ համակարգի միջոցով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

<u>9.3 Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:</u> Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Մինչդեռ՝ Պատվիրատուի կողմից տրամադրված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ վերը նշված փաստաթղթերը, այն է՝ Պ<u>ատվիրատուի կողմից Ընկերությանն ուղարկված ծանուցումը, որով ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը և նշված ծանուցումն Ընկերությանն ուղարկված լինելու փաստը հավաստող ապացույցը առկա չեն, որպիսի պայմաններում հնարավոր չէ փաստել, արդյո՞ք Ընկերությանը սահմանված կարգով և ժամկետներում ուղարկվել է պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, սակայն վերջինս դրանք ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրել պայմանագիրը և Պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի ապահովումները:</u>

Մինչդեռ՝ Կարգի 45-րդ կետը հստակ սահմանում է, որ պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու նպատակով պետք է ներկայացներ Ընկերության տվյալները՝ **<u>համապատասխան հիմքերով</u>**:

Վերը շարադրված փաստական հանգամանքների ուժով՝ գտնում եմ, որ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի բացակայության պայմաններում

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Թեքնոլաբ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.05.2022թ. թիվ 26/26-1/9973-2022 գրությամբ «Թեքնոլաբ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**